**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/58407-2019

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (Պ-381-19.11.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1911 - Ա որոշումը:

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան

Հեռ. 515685

«ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-381-19.11.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ:

1. Նախագծի 1-ին հոդվածի համաձայն նախատեսվում է տեղում ստորագրությունների հավաքի կազմակերպումն իրականացնել բացի օրենքով արդեն իսկ սահմանված վայրերից՝ *օրենքով չարգելված այլ վայրերում*: Որպես տվյալ լրացման հետ կապված փոփոխություն՝ նախագծով առաջարկվել է «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 16-րդ մասից հանել այն դրույթը, որի համաձայն տեղում ստորագրությունների հավաքումն իրականացնում է նախաձեռնող խմբի ներկայացուցիչը՝ համապատասխան հանրային ծառայողի պարտադիր մասնակցությամբ:

Վերոգրյալ փոփոխության և լրացման հետ կապված՝ գտնում ենք, որ դրանք հղի են տեղում ստորագրությունների հավաքման օրինականության ապահովման լուրջ սպառնալիքներով, քանի որ Քաղաքացիական նախաձեռնության մասնակիցների ստորագրությունների վավերականությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն տեղում ստորագրելու դեպքում ձևաթերթիկում լրացվում են ստորագրողի *անձնագրային տվյալները*, ձևաթերթիկն ստորագրում և հանձնվում է ստորագրությունների հավաքումն իրականացնող անձին, իսկ էլեկտրոնային եղանակի դեպքում ձևաթերթիկն ստորագրվում է էլեկտրոնային նույնականացման եղանակով: Այսինքն, 16-րդ մասի այն դրույթը, որի համաձայն տեղում ստորագրությունների հավաքումն իրականացվում է հանրային ծառայողի պարտադիր մասնակցությամբ, միտված է ստորագրությունների հավաքման ժամանակ չարաշահումների կանխարգելմանը, մասնավորապես, այլ անձի փոխարեն ստորագրելը, այլ անձի անձնական տվյալներն ապօրինաբար օգտագործելը կանխելուն: Այսինքն, գործող կարգավորումն ուղղված է տեղում ստորագրությունների իսկության ստուգման իրականացմանը:

Մինչդեռ, նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը գործնականում հնարավորություն չի ունենա իրականացնելու Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 204-րդ հոդվածով, ինչպես նաև «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված իր՝ ստորագրությունների վավերականությունը հաստատելու պարտականությունը: Այսինքն, գործնականում անհնար է պատկերացնել, թե ինչպես պետք է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական

հանձնաժողովը հաստատի ստորագրությունների վավերականությունը, եթե դրանք վերցված լինեն ցանկացած վայրից՝ առանց հանրային ծառայողի մասնակցության:

Ինչ վերաբերում է «օրենքով չարգելված վայրերում» ստորագրությունների հավաքի առաջարկին, ապա գտնում ենք, որ այդ պարագայում անհրաժեշտ է նախագծով սահմանել «օրենքով չարգելված վայրերը»:

2. Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Թերությունների հայտնաբերման դեպքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովն անհապաղ տեղեկացնում է քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցչին և տրամադրում 10 աշխատանքային օր՝ հայտնաբերված թերությունները վերացնելու համար:»:

Կարծում ենք որոշակիորեն անորոշ է «թերություններ» կատեգորիան: Բացի դրանից, նույնիսկ մեխանիկական թերությունների դեպքում ստորագրությունը պետք է ճանաչվի ոչ վավերական, և չպետք է այն վերացնելու լրացուցիչ ժամկետ տրամադրվի:

Ինչ վերաբերում է թերությունների մասին «անհապաղ տեղեկացնելուն», ապա գտնում ենք, որ անորոշ է, թե որ պահին պետք է իրականացվի «անհապաղ տեղեկացումը»՝ յուրաքանչյուր թերության հայտնաբերումից, թե բոլոր ստորագրություններն ուսումնասիրելուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2019 թվականի N 1911 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (Պ-381-19.11.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 16
Երևան

ՆԱԽԱԳԻԾ
Պ-381-19.11.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «առնվազն 50» բառերը փոխարինել «առնվազն 25» բառերով,

2) 5-րդ մասում «երեք» բառը փոխարինել «տասն» բառով,

3) 5-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Եթե տասնօրյա ժամկետում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում չի կայացնում, նախաձեռնող խումբը համարվում է գրանցված:»:

4) 15-րդ մասը լրացնել նոր 5-րդ կետով.

« 5) Օրենքով չարգելված այլ վայրերում:»:

5) 16-րդ մասում հանել «՝ համապատասխան հանրային ծառայողի պարտադիր մասնակցությամբ» բառերը:

6) 19-րդ մասում «45 օրվա»եւ «90 օրվա» բառերը փոխարինել համապատասխանաբար՝ «90 օրվա»եւ «180 օրվա» բառերով:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Թերությունների հայտնաբերման դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անհապաղ տեղեկացնում է քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցչին եւ տրամադրում 10 աշխատանքային օր՝ հայտնաբերված թերությունները վերացնելու համար:»: